ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«04» 06 2018 թ.
Ե-32

Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի

գործադիր տնօրեն

Սոնա Այվազյանին

Հարգելի տիկին Այվազյան

Ս.թ. մայիսի 18-ին ՀՀ ազգային ժողովի նախագահը դիմել է մեզ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների ընտրության համար ձևավորված մրցութային խորհրդի կազմում թեկնածու առաջադրելու նպատակով:

Ս.թ. մայիսի 24-ին, ի պատասխան ԱԺ նախագահի գրության, առաջադրվել է Հանրային խորհրդի անդամ, ՀԽ քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողովի նախագահ Հովհաննես Հովհաննիսյանի թեկնածությունը՝ հիմք ընդունելով Հանրային խորհրդի որոշումը:

Նշենք, սակայն, որ այդ մասնակցությունը կարող է լինել ժամանակավոր, քանի որ, ըստ «Հանրային խորհրդի մասին» օրենքի, մոտակա ժամանակներում պետք է ձևավորվի նոր Հանրային խորհուրդ, որը և կարող է ընտրել մրցութային խորհրդի նոր անդամ:

Այս պահին Հովհաննես Հովհաննիսյանի ընտրությունը հիմնավորված է նրանով, որ վերջինս հանդիսանում է «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թթ. միջոցառումների» շրջանակում Հանրային խորհրդում ստեղծված աշխատանքային խմբի համակարգող և ակտիվ համագործակցել է այդ ոլորտում գործունեություն իրականացնող պետական ու հասարակական կառույցների հետ:

+374 10 523405
+374 10 523407
+374 10 523416
info@publiccouncil.am
www.publiccouncil.am

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Վազգեն Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն

PUBLIC COUNCIL OF RA
Vazgen Sargsyan 26/1, «Erebuni plaza» business center, Yerevan 0010, Republic of Armenia

ОБЩЕСТВЕННЫЙ СОВЕТ РА
Вазгена Саркисяна 26/1, бизнес-центр «Эребуни плаза», Ереван 0010, Республика Армения

Հովհաննես Հովհաննիսյանը փիլիսոփայական գիտությունների թեկնածու է, ԵՊՀ դոցենտ, «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոնի նախագահն է, Հայոց փիլիսոփայական ակադեմիայի գլխավոր գիտական խորհրդականը, Հայաստանում ֆրանսիական համալսարանի հումանիտար և հասարակագիտական առարկաների կրթաբլոկի ղեկավարը, 2014 թ. եղել է Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի Իրավական խորհրդատվական խմբի անդամ, 2017-ից «Եվրասիայի ժողովուրդների ասամբլեա» միջազգային ոչ կառավարական կազմակերպության գլխավոր խորհրդի անդամ է, ներգրավված է եղել նաև այլ կառույցների աշխատանքներում:

Հարգանքով՝

ՀՀ Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյան